ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.02.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-04/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-04/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 14.01.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-04/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ 2012թ. դեկտեմբերի 14-ին մասնակցել է «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով դեղորայքի ձեռքբերման ընթացակարգին:

Ներկայացված բողոքի առարկան է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 28.12.2012թ. թիվ 5 արձանագրությունը: Նշված արձանագրության 3-րդ կետով «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի բժշկական խորհրդի կողմից տրված եզրակացությունը դեղորայքի համարժեքության վերաբերյալ, որոշել է մերժել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից կատարված առաջարկը 77-րդ չափաբաժնի մասով՝ առաջարկած դեղամիջոցները հրավերով նախատեսվածին համարժեք չլինելու պատրվակով:

Հատկանշական է, որ գնահատող հանձնաժողովը միայն փաստել է համարժեք չլինելու հանգամանքը, սակայն որևէ հիմնավորում այդ մասով չի ներկայացրել: Արդյունքում, նշված չափաբաժնի մասով հաղթող է ճանաչվել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, որի ներկայացրած

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հատկանշական փաստն անհիմն է, քանի որ «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն որևէ ապացույց չի ներկայացրել և ինչպես նշվեց, գնահատող հանձնաժողովը գնահատել է ներկայացված առաջարկի համարժեքությունը:

Բողոքաբեր կազմակերպությունը նշել է, որ ընթացակարգի 77-րդ չափաբաժնով հաղթող է ճանաչվել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, որի ներկայացրած գնային առաջարկը տվյալ չափաբաժնի մասով գերազանցում է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետը, քանի որ առաջին տեղն զբաղեցրած (ընտրված) մասնակիցը որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, մինչդեռ բողոքաբեր մասնակցի հայտն առաջին տեղն զբաղեցրած (ընտրված) մասնակցին որոշելու պահին եղել է մերժված:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 14.01.2013թ. ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղորայքի ձեռքբերման նպատակով «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով կազմակերպած շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2012թ. N 5 արձանագրության 3-րդ կետով ընդունած որոշումը՝ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 77-րդ չափաբաժնի համար կատարված առաջարկը մերժելու մասով:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գայանե Գասպարյան

Անդամներ՝ Ռուդիկ Օհանյան

Կարապետ Խարբերդյան